պէտք է պատմուի՝ թէ մուկը զարհուրած ձայնով աղաչեց առիւծից՝ որ . . . ։

«Քեզ ի՞նչ օգուտ իմ մահս» հարցմունքը՝ ճարտասանական գարձուածք է՝ որ նշանակում է «իմ մահը քեզ չի բերի ոչինչ օգուտ»՝ որով յայտնի է՝ թէ այն խօսքին ինչ կերպէ պատմական ձև պէտք է տալ։

«Գնա» . . . կտորը այսպէս կարելի է փոխել։ Մեծահոգութեամբ պատասխանեց առիւծը՝ թէ նա պատրաստ է խնդիրը կատարել՝ և իսկոյն արձակ թողուց մկան։ Իսկ ինքն իւր մտքի մէջ ծիծաղեց նորա խոստման վերայ՝ որովհետև չէր կարծում՝ թէ մի մուկ կարող է առիւծին երախտագիտութեամբ լաւութիւն անել։

«Համբերիր՝ բարեկամ» — մտերմաբար միխիթարեց՝ որ կարճ ժամանակ սպասէ։

Ս. ՄԱՆԴԻՆԵԱՆ.

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ

Օգոստոսի 21ին Վեհափառ Հայրապետն ազգիս բարեհաճեցաւ վերադառնալ ամարանոցից Ս. Աթոռս։ Բոլոր միաբանութիւնը Մայր Աթոռոյս՝ աշակերտք ու վերակացուք ճեմարանի և խուռն բազմութիւն ժողովրդոց Վաղարշապատի հրապարակի դրան առաջ սպասում էին Նորին Օծութեան։ Երեկոյեան 8 ժամին՝ արդէն մութն ընկած՝ երևեցան Նորին Օծութեան և նրան ուղեկցող պաշտօնատար և մասնաւոր անձանց կառքերն ու ձիաւորաց խումբը։ Կառքից իջնելով Նորին Օծութիւնն գնաց Ս. Տաճարն՝ ուր սովորական աղօթքը կատարելից և ներկայ ժողովրդեան օրհնելից յետոյ գնաց Վեհարան հանգստանալու։